

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Դերանունների խոսքիմասային բնույթի և դասակարգման հարցերը միշտ էլ գտնվել են քերականագետների ուշադրության կենտրոնում: Այստեղ կան ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառները թաքնված են հենց դերանունների բնույթի մեջ: Սուբյեկտիվ պատճառները պայմանավորված են հիմնականում դերանունների ուսմունքի զարգացման առանձնահատկություններով: Փորձենք քննել դերանունների ավանդական ուսմունքի առանձնահատկությունները և ըստ հնարավորին պարզություն մտցնել հարցի մեջ:

Դերանունների ուսմունքը մշակվել է աստիճանաբար և, հասկանալիորեն, կրում է իր անցած ճանապարհի կնիքը: Դպրոցական քերականության ժամանակակից ուսմունքը ձևավորվել է գերազանցապես հունալատինական քերականության ազդեցության տակ: Ինչպես ցույց է տալիս դեռևս (հուն. αντωνυμία, ըստ pronomen) անվանումը, այն դիտվել է որպես անվան փոխարեն դրվող, անվան դեր կատարող խոսքի մաս: Դերանվան մեջ սկզբնապես դրվում էին միայն անձնական և ստացական տեսակները. մնացածները համապատասխանաբար բաշխվում էին հոգերի և անունների մեջ: Դերանունների դասի լայնացումը տեղի է ունենում հետագայում, այն էլ ոչ միասնաբար և ոչ միաժամանակ:

Հայերենի դերանվանական ուսմունքի մշակումը տեղի է ունեցել նախ հունական, ավելի ուշ՝ լատինական, ապա ռուսական և գերմանական, արևմրտահայերի մոտ՝ նաև ֆրանսիական ազդեցության տակ: Այսպես, եթե XVII դ. քերական Սիմեոն Զուղայեցիի դերանունների շրջանակը դեռ սահմանափակում է անձնական, ստացական և գոյականաբար առնվող ցուցական դերանուններով, ապա XVIII դ. քերական Յ. Յ. Շրյոդերը թվարկում է գրաբարի դերանունների ութ տեսակ՝ 1) անձնական՝ ես, դու, սա, դա, նա, 2) ցուցական՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, 3) ստացական՝ իմ, բո, իւր, մեր, ձեր, 4) հարաբերական՝ որ, 5) հարցական՝ ո՞, ո՞վ, ի՞նչ, 6) անորոշ՝ ոմ, ոմն, իմն, 7) ազգական՝ իմային, մերային, բոյին, ձերային, իւրային, 8) անդրադարձ՝ միմեանք, ինքն, իւրեանք, անձն:

Մխիթար Սեբաստացին տվել է այլ դասակարգում: Նա, ներառելով հոգերը, տարբերում է միայն հինգ տեսակ դերանուն՝ 1) «էական» (անձնական՝ ես, դու, ինքն, իւր, իւրեան, 2) ստացական՝ իմ, բո, մեր, ձեր, իւր, 3) դիմորոշական՝ ս, դ, ն, 4) ցուցական՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, 5) հարաբերական՝ որ. անորոշ և հարցական դերանունները նա դնում է անունների մեջ: Այս դասակարգումը լայն տարածում է գտնում հետագա քերականների մոտ, միայն թե հոգերը հանվում են դերանունների թվից:

Ա. Բագրատունին ներմուծում է դերանունների դասակարգման լրացուցիչ սկզբունք. ըստ շարահյուսական հիմնական կիրառության նա տարբերում

է գոյականական և ածականական տեսակներ. ըստ նրա՝ գոյականական արժեք ունեն անձնական կամ «դիմի» դերանունները (ես, դու, ինքն, իւր), որոշ ցուցականներ (սա, դա, նա), հարաբերական դերանունները (ո, որ), ածականական արժեք՝ ստացական դերանունները (իմ, քո, մեր, ձեր, իւր և այլն) և որոշ ցուցականներ (այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն):

Աշխարհաբարի առաջին տպագիր քերականութեան հեղինակ Ս. Պալասանյանը դերանվան սահմանման մեջ նորութուն չի բերում: Դերանունները նա համարում է բառեր, որոնք «գոյական ու ածական անունների տեղ են դրվում»¹: Ըստ «նշանակութեան» Պալասանյանը տարբերում է 1) հարցական, 2) անձնական, 3) ցուցական, 4) ստացական, 5) հարաբերական և 6) անորոշ, ըստ գործածութեան՝ գոյական և ածական անունների տեղ գործածվող դերանուններ: «Անորոշ» անվան տակ միավորվում են հետագայում «որոշյալ», «անորոշ» և «ծխտական» կոչվող դերանունները (յուրաքանչյուր, ամեն, մյուս, ուրիշ, ոմանք, նույն, ոմմին, իմմին, ոչինչ: Ս, դ, ն հոգերը Պալասանյանը կոչում է դիմորոշ կամ դերանվանական:

Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականութեան» մեջ տարբերում է 1) անձնական (ես, դու, նա, ինքն), 2) ցուցական (սա, դա, նա, այս, այդ, այն), 3) փոխադարձ (միմյանց, իրար, մեկմեկու), 4) հարաբերական կամ շաղկապական դերանուններ (որ): Անորոշ (մարդ, ոմն, ոք, ոչ ոք, բան, ինչ, ինչ-ինչ, ոչինչ, ոմմին, իմ, իմմին, ոչով), հարցական (ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, ե՞րբ) և սրանց համապատասխան հարաբերական բառերը (ով, ինչ, ուր, երբ) Մ. Աբեղյանը դնում է անունների մեջ²: Դերանունները Մ. Աբեղյանը նույնպես համարում է բառեր, որոնք «դրվում են անունների տեղ», բայց միաժամանակ նշում է, որ ի տարբերություն անունների, որոնք «հաստատուն, անփոփոխ նշանակություն ունեն», դերանունները «հաստատուն նշանակություն չունեն, այլ ամեն անգամ նայելով ինչ անվան տեղ են դրված, նրա նշանակությունն էլ ստանում են»³:

«Հայոց լեզվի տեսութեան» մեջ Մ. Աբեղյանը դերանուններին վերագրում է «թանձրացական հատուկ նշանակություն» և ըստ գործառական արժեքի տարբերում գոյական դերանուններ, ածական դերանուններ և դերանվանական մակբայներ (աստ, անդ, ուր)⁴:

Մ. Աբեղյանից հետո դերանունը նոր ձևով սահմանելու փորձ է կատարում Գ. Սևակը⁵: Ըստ նրա՝ դերանվան էությունը ոչ թե այն է, որ նա հարաբերակից է գոյականին, ածականին ու մակբային և «խոսքի մեջ փոխարինում է նրանց, այլ այն, որ նա ցույց է տալիս առարկայի հատկանիշ, հատկանիշի հատկանիշ՝ «ընդհանրապես, առանց տարբերակման, մինչդեռ համապատասխան, գոյականները, ածականները և մակբայները ցույց են տալիս տարբերակված կերպով, «մասնավորապես»:

Ա. Ղարիբյանը, Գ. Սևակի սահմանման որոշ ձևափոխությամբ, դերանուն է համարում «այն բառերը, որոնք գործածվում են գոյականի, ածականի, թվականի, մակբայի փոխարեն՝ յուրաքանչյուրի ընդհանուր նշանակությամբ»⁶:

¹ Ստ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, էջ 64:

² Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1986, էջ 50—55:

³ Նույն տեղը, էջ 52:

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1981, էջ 131—132:

⁵ Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը. «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», Եր., 1939, նույնի, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 241—242:

⁶ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, 6-րդ հր., Եր., 1945, էջ 162:

նա տարբերում է 1) անձնական, 2) ցուցական, 3) փոխադարձ, 4) հարցական, 5) հարաբերական, 6) որոշյալ (ամեն, ամենը, բոլոր, յուրաքանչյուր, ամբողջ, ամեն ինչ, յուրաքանչյուր ու, ամեն ու), 7) անորոշ (ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, այսինչ, այնինչ, մի ֆանիսը, ուրիշ, այլ, ովքե՛, որե՛, երբե՛, ար ու է, ինչ ու է), 8) ժխտական (ոչ ու, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը) դերանուններ:

Կարելի է ասել, որ հետագա հայ քերականների մոտ այս սխեման քիչ է փոփոխվում: Նրանք ուշադրությունը կենտրոնացնում են, այսպես կոչված, իմաստային դասակարգման վրա՝ հարևանցի խոսելով կամ շխոսելով գործառական դասակարգման մասին: Ս. Աբրահամյանը, որ հատուկ մենագրություն է նվիրել դերանուններին, դրանք սահմանում է որպես բառեր, որոնք «ունենալով ընդհանուր, շտաբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ, որևէ ձևով»⁷: Նա միացնում է հարցական ու հարաբերական դերանունները և ժխտականները դիտում որպես անորոշների ենթատեսակ: Է. Աղայանի և Հ. Բարսեղյանի միջնակարգ դպրոցի այժմ գործող դասագրքում⁸, հավանաբար ավանդույթը շխախտելու նկատառումով, դերանունները սահմանվում են որպես բառեր, որոնք «գործածվում են զոյական, ածական, թվական անունների և մակբայների փոխարեն»⁹, այլև ընդունվում նույն տեսակները, ինչ Ա. Ղարիբյանի դասագրքում:

Եթե ամփոփելու լինենք դերանվանական ուսմունքի անցած ուղու արդյունքները, ապա կարող ենք ասել հետևյալը:

1. Հին ժամանակներից ի վեր դերանունը սահմանվում է որպես անուններին, հետագայում՝ նաև մակբայներին փոխարինող բառերի խումբ (խոսքի մաս): Սրա հետ միասին կամ ի հակադրություն սրա՝ տարբեր հեղինակների կողմից նշվում է, որ դերանվան բուն էությունը սա չէ, բայց այն հարցը, թե ո՞րն է այդ էությունը, հստակ և միանշանակ պատասխան չի ստանում: Մ. Աբեղյանը դերանունները հակադրում է անուններին նրանով, որ դրանք «հաստատուն, անփոփոխ նշանակություն չունեն»։ Գ. Սևակը՝ նրանով, որ զոյականը, ածականը և մակբայը ցույց են տալիս առարկա, հատկանիշ և հատկանշի հատկանիշ տարբերակված կերպով, մասնավորապես, իսկ դերանունները «ընդհանրապես»։ Ս. Աբրահամյանը՝ նրանով, որ դերանունները «ունենալով ընդհանուր, շտաբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ, որևէ ձևով»:

2. Սկսած Ա. Բագրատունուց տարածվում և ամենից ավելի ցայտուն կերպով Մ. Աբեղյանի կողմից ձևակերպվում է այն կարծիքը, որ դերանունները պետք է խմբավորվեն ոչ միայն ըստ իմաստի (նշանակության), այլև ըստ ո՞ր խոսքի մասի դեր կատարելու:

3. Դերանունների դասակարգումն ըստ իմաստային խմբերի աստիճանաբար ընդլայնվում է՝ վերջիվերջո հասնելով որոշ ստանդարտի. արդի քերականները սովորաբար տարբերում են 7—8 խումբ՝ որոշակի ավանդույթով սլայմանավորված անվանումներով:

Սկսած 60-ական թվականների վերջերից դերանվան բնույթի հարցը քննվել է հոդվածի հեղինակի տարբեր աշխատություններում¹⁰, սակայն դրանք

⁷ Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Եր., 1955. էջ 82:

⁸ Է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, Եր., 1965:

⁹ Նույն տեղում, էջ 167:

¹⁰ Հմմտ. հատկապես Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր.,

հարկ եղած շահույթ չեն փոխել արմատացած պատկերացումները: Ի մի բերելով այդ աշխատությունների հիմնական արդյունքները՝ այժմ կփորձենք ամփոփ գաղափար տալ դերանվանական մեր ուսմունքի հիմնական սկզբունքների մասին:

1. Ամենից առաջ հարկավոր է խստորեն տարբերակել դերանունների իմաստային և գործառական (խոսքիմասային) արժեքները: Գրանք իրար ոչ թե հակադրվում են, այլ լրացնում. այլ կերպ ասած՝ դերանունները չի կարելի դասակարգել դրանցից միայն մեկի հիման վրա՝ բացառելով մյուսը: Նշենք, որ գործառական տարբերակման հարցում ընդհանրապես միասնություն չկա: Այսպես, ֆրանսիական քերականները բուն դերանուններ համարում են միայն գոյականական, ուստի քերականները՝ սովորաբար միայն գոյականական ու ածականական դերանունները: Հայ քերականության առանձնահատկությունն է կազմում հավասարապես նաև մակբայական դերանունների տարբերակումը: Թեև այսպիսով հայ քերականները հասնում են տրամաբանական ավելի մեծ հետևողականության, բայց դրանով իսկ «դերանուն» բառը հակասության մեջ է մտնում իր առումն բաղադրիչի հետ, քանի որ մակբայը անունների մեջ չի դրվում: Այս մոտեցմամբ անհրաժեշտ է դառնում տարբերակել «անուն» բառի նեղ և լայն ըմբռնումներ՝ լայն առումով «անվանողական» խոսքի մասերը հակադրելով ոչ անվանողականներին՝ դերանուններին, և նույնիսկ խոսել բայերի անվանողական արժեքի մասին: Եվ իրոք. անվանման հիմքում ընկած են նշանակվող (անվանվող) օբյեկտների զանազան հատկանիշներ, որոնցով նրանք միացվում են առանձին խմբերի մեջ և տարբերակվում մյուս խմբերից: Մեր համընդհանուր ուսմունքի մեջ առանձնացվում են հատկանիշների երկու խմբեր՝ առարկայական և վիճակային: Առաջինները հանդես են գալիս գոյականի քերականական կարգերի (հատկապես սեռի և դասի, թվի), առդիրների (կապերի) և առաջնային որոշիչ բառերի (ածականների ու թվականների, այլև գոյականացած ածականների) միջոցով, երկրորդները՝ բայական ու ածականական կարգերի (ժամանակ, կերպ և այլն), շաղկապների և մակբայների միջոցով:

2. Վերևում բերված կարծիքներից երևում է, որ հայ քերականները խոսում են դերանվան՝ գոյականից, ածականից և մակբայից ունեցած էական տարբերության մասին, բայց այդ հարցին փաստորեն հստակ լուծում չեն տալիս՝ հակադրելով դրանք ըստ «հաստատուն» նշանակություն ունենալու թե չունենալու (Մ. Աբեղյան), «տարբերակված թե չտարբերակված (ընդհանուր)» իմաստ արտահայտելու (Գ. Սևակ, Ս. Աբրահամյան), անվանելու թե «որևէ հարաբերությամբ, որևէ ձևով» ցույց տալու (Ս. Աբրահամյան): Եթե մենք «որևէ հարաբերությամբ» բառերը ճշգրտենք, ապա հեշտ կլինի հասկանալ այս կարծիքների հիմքը: Նման ճշգրտում արված է մեր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքում: Այստեղ նշված է, որ դերանունները «բնորոշվում են մի կարևոր ընդհանուր հատկանիշով՝ իրադրականությամբ: Այս բառերի իմաստը որոշվում է իրադրությամբ՝ առարկայական և կոնտեքստային: Անձնական, ցուցական և հարցական բառերի համար բնորոշ է առարկայական իրադրականությունը, հաղորդակցման իրադրության հետ կապված լինելը. երկրորդաբար այն կարող է դառնալ կոնտեքստային (հմտ. սա, որ կարող է ցույց տալ հաղորդակցման ժամանակ անմիջապես առկա և խոսողին մոտ առարկան, կոնտեքստում՝ մերձավոր բառը): Հարաբերական դերանունները միայն կոնտեքստային իմաստ ունեն: Այս բոլոր բառերը, որպես իրա-

դրական բառեր, հակադրվում են անվանական բառերին, որոնց ընդհանուր հմաստը կախված չէ իրադրությունից և կոնտեքստից»¹¹: Այսպիսով, բուն գոյականները, ածականները և մակբայները տարբերակվում են ըստ իրենց նշանակած առարկաների և հատկությունների բնույթի, դերանունները (դերանուն գոյականները, դերանուն ածականները և դերանուն մակբայները)¹², ըստ առարկաների և հատկությունների՝ հաղորդակցման ակտի (խոսքի) հետ ունեցած հարաբերության: Երկու դեպքում էլ բառերի մեջ մենք գործ ունենք ընդհանրացման և տարբերակման հետ, բայց տարբեր են այդ ընդհանրացման և տարբերակման հիմքերը:

3. Գերանվան, որպես մեկ խոսքի մասի սահմանադատման և ընդհանուր բնույթի որոշման հիմքում իրադրականության հատկանիշը դնելու դեպքում մենք նրա մեջ կարող ենք ներառել միայն այն բառերը, որոնց բուն արժեքը կապված է կամ հաղորդակցական, կամ կոնտեքստային իրադրության հետ, այսինքն՝ որոշվում է հաղորդակցվողների տեսադաշտային և տեքստային շրջապատի (կոնտեքստի) միջոցով: Սակայն նկատի ունենալով, որ որոշ դերանունների մեջ երկու կարգի՝ առաջնային և երկրորդային արժեքները զուգորդվում են, կարող ենք տարբերել երեք խումբ՝ 1) միայն հաղորդակցական իրադրության հետ կապված. 2) միայն կոնտեքստային իրադրության հետ կապված, 3) թե հաղորդակցական, թե կոնտեքստային իրադրության հետ կապված, այսինքն՝ երկրորդարար կոնտեքստային արժեք ստացող դերանուններ: Սրան միացնելով սկզբնական արժեքով հարցական, թե պատասխանական արժեք ունենալու հատկանիշը, որով տարբերվում են 1-ին և 3-րդ խումբերը, կունենանք դերանունների հետևյալ տեսակները.

1) Հարցական՝ ա) բուն հարցական (հաղորդակցական)՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ր. բ) հարաբերական (կոնտեքստային)՝ ով, ինչ, ուր.

2) Ցուցական՝ ա) բուն ցուցական (հաղորդակցական)՝ ես, դու («անձնական»), սա, դա, նա, այս, այդ, այն. բ) հարաբերական ցուցական (կոնտեքստային)՝ սա, դա, նա, այս, այդ, այն.

3) Անդրադարձ և փոխադարձ (կոնտեքստային)՝ իմևր, ին՛նիրեն, իրաւր, միմյանց, մեկմեկի:

4) Եթե անվանողական արժեք ասելով հասկանանք այն բառիմաստները, որոնք հենվում են նշանակվող օբյեկտների հատկանիշների վրա, ապա չի կարելի ասել, որ դերանուններն ընդհանրապես զուրկ են անվանողական արժեքից: Գերանունների անվանողական արժեքները կարող են արտահայտվել նրանց հենց արմատի կամ հիմքի միջոցով (հմմտ. ո՞վ—ի՞նչ հարցական դերանունները, որոնք տարբերակում են օբյեկտները ըստ որոշակի անվանողական հատկանիշի՝ անձ թե ոչ-անձ (իր) լինելու), 2) վերջամասնիկներով (վերջավորություններով ու վերջածանցներով. հմմտ. ի՞նչ—ինչե՞ր—ինչո՞ւ), 3) բարդություն կազմող հատուկ՝ կատեգորիական իմաստ արտահայտող բաղադրիչներով՝ այես, -լան, -տեղ, 4) դերանունների և կատեգորիական ընդհանուր իմաստ ունեցող բառերի ու կապերի՝ դերանվանական մեկ արժեք ունեցող կապակցություններով՝ ինչ ձևով (հմմտ. ինչպե՞ս), ո՞ր ժամանակ (հմմտ. ե՞րբ), ի՞նչի համար (հմմտ. ինչո՞ւ) և այլն: Այսպիսով կարելի է ասել, որ զուտ իրադրական արժեքի դերանունները սակավաթիվ են (հմմտ. ուր). դերանունները մեծ մասամբ անվանողական-հատկանիշային որոշ ածականություններ պարունակում են: Իսկ անվանողական ընդհանուր-կարգային (կատեգորիական) ի՞նչ իմաստներ են պարունակում դերանունները: Մեր կող-

¹¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 180:

մից կառուցված համընդհանուր լեզվական կաղապարը, որ բերված է «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում¹², հնարավորություն է տալիս որոշելու իմաստների այդ շրջանակը: Միայն թե հարկավոր է նկատի ունենալ, որ նախ՝ ոչ բոլոր համընդհանուր կարգերն են բառային արտահայտություն ստանում. ըստ անհրաժեշտության շատ իմաստներ կարող են տարբերակվել, ինչպես նշվել է, դերանունների և կատեգորիական ընդհանուր արժեք ունեցող բառերի միջոցով. երկրորդ՝ շատ կարգեր հանդես են գալիս համատեղ (չտարրորշված)՝ համանունաբար և բազմիմաստաբար. որպես կանոն կարելի է ասել, որ ամենից քիչ տարբերակված են գոյականական, ամենից շատ՝ մակբայական դերանունները. միջին տեղ են գրավում ածականները. հարկավոր է նկատի առնել, որ գոյականական իմաստները հենվում են առարկաների հատկանիշների վրա և իրենց հիմքում վերջիվերջո ունեն ածականական իմաստներ:

Գոյականական դերանուններին հիմնականում հատուկ է անձ—ոչ-անձ (իր) տարբերակումը, ընդ որում այդ տարբերակումը ոչ բոլոր դերանունների դեպքում է անցկացվում հետևողաբար. այսպես, դերանվանական թվարկված որոշ խմբերի դեպքում այդ հակադրությունը հետևողականորեն անց է կացվում (ո՞վ—ի՞նչ, ով—ինչ), երկրորդ դեպքում առկա է միայն մի կողմը (ես, դու, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, դերանունները ցույց են տալիս անձեր և շունեն հակադիր՝ եզրեր), երրորդ դեպքում տարբերակում չկա (սա, դա, նա, իրա, միմյանց, մեկմեկի դերանունները կարող են դրվել և՛ անձերի, և՛ իրերի անունների վրա): Անձ—ոչ-անձ տարբերակումը հենվում է գիտակցության և մտածողության հոգեկան կարգերով (կատեգորիաներով) բնութագրվելու և չբնութագրվելու հատկանիշի վրա:

Արմատական կազմության ածականական դերանունները ըստ առարկայական կարգերի (կատեգորիաների) քիչ են տարբերակված. ի՞նչ (ի՞նչ մարդ, ի՞նչ տուն), այս, այդ, այն դերանունները ընդհանուր արժեք ունեն (կարող են դրվել և՛ անձերի, և՛ իրերի անունների վրա), որ-ը կարող է ցույց տալ նաև կարգ (դաս)՝ որ մարդը (պատասխանը կարող է լինել՝ այս մարդը, երբորդ մարդը):

Բաղադրյալ և հորիվածակային ածականական դերանունները կարող են տարբերակվել ըստ կարգերի (կատեգորիաների) մեծ մասի՝ թվի (ֆանի՞ մարդ, որի՞նչ մարդ, այսֆան մարդ, այդֆան մարդ, այնֆան մարդ), դասի (կարգի՞ նեղ իմաստով՝ ո՞րե՞րորդ մարդը), կախման (ո՞ւմ տունը), ձևի (ինչպիսի՞ տուն), շափի (ֆանիսանո՞ց դրամ), տեղի (որտեղի՞ բնակիչ. գոյականացված որտեղացի՞):

Է՛լ ավելի տարբերակված են դերանվանական կապակցությունները՝ ըստ կազմի (ի՞նչ կազմի բանակ), թվի (ի՞նչ թվով մարդիկ, ի՞նչ ֆանակով սեղաններ), դասի (կարգի՞ որ կարգի մեմեմ), կախման (ումնի՞ց կախված պաշտոն, մարդ), ձևի (ի՞նչ ձևի տնակ), շափի (ի՞նչ շափի սենյակ), ուղղության (ի՞նչ ուղղության փողոց), տեղի (ի՞նչ տեղի), իմացության (ինչի՞ վերաբերյալ ֆարց), լեզվի (ի՞նչ անունով մարդ):

Շատ ավելի մեծ են մակբայական դերանունների հնարավորությունները. այստեղ՝ 1) արմատական և բաղադրյալ ձևերի քանակն ավելի մեծ է և իմաստային տարբերակումն ավելի հստակ արտահայտված. 2) բայը, լինելով առարկայական հարաբերությունների արտահայտիչ, իր շուրջը կարող է հավաքել նաև այնպիսի մակբայական ձևեր, որոնց իմաստները վերաբերում են

¹² Պ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 14—19:

առարկայական (գոյորոշ) կարգերին (կատեգորիաներին). այլ կերպ ասած՝ մակբայական դերանունները ենթաառարկայական (առգոյորոշ, վիճակային) կարգերին հատուկ իմաստների հետ միասին արտահայտում են նաև բուն առարկայական (գոյորոշ) կարգերին հատուկ իմաստներ: Թվարկել արմատական, բաղադրյալ և կապակցական մակբայների բոլոր խմբերը՝ նշանակում է թվարկել բոլոր համընդհանուր կատեգորիական իմաստները, ուստի բավարարվենք առաջին երկու խմբերի քննությամբ. հաճախայնություն՝ ֆանի՞ցս (հմմտ. ֆանի՞ աճգամ), պատճառայնություն և նպատակայնություն՝ ինչո՞ւ (հմմտ. ի՞նչ պատճառով, ինչի՞ համար, այս պատճառով), ժամանակի և կերպի՝ ե՞րբ, այժմ, արդ, հիմա, երեկ, հետո, վաղը, ընթացածևի՞ ինչպե՞ս, այսպես, այդպես, այնպես, չափի և համեմատության՝ ինչֆա՞ն, այսֆան, այդֆան, այնֆան, տեղի և ուղղության՝ որտե՞ղ, ո՞ւր, այստեղ, այդտեղ, այնտեղ, դեսը, դենը:

5. Իրադրականության հատկանիշը դերանունների որոշման հիմքում դրնելու դեպքում խստորեն ասած մենք, այսպես կոչված, որոշյալ, անորոշ և, վերջիններիս հետ կապված, ժխտական բառերը դերանուններ չպետք է համարենք: Եվ իրոք. ի՞նչ բառեր են գրվում այս խմբերի մեջ: Արդի հայերենի քերականները որոշյալ են համարում առաջնային ածականական՝ (ամբ)ողջ, ամեն (ամեն մի), բոլոր, համայն, յուրաֆանչյուր, և սրանց հիման վրա կազմված փաստորեն երկրորդական գոյականական բառերը և բառազուգորդումները՝ (ամբ)ողջը, ամեն ինչ, ամեն մեկը, ամեն ո՛վ, բոլորը, յուրաֆանչյուր, յուրաֆանչյուր ո՛վ, այլև՝ ամեն մարդ, ամեն մի մարդ, յուրաֆանչյուր մարդ¹³: Որոշյալների մեջ գրվում են ածականական այլ, այսինչ, այնինչ, ինչ-ինչ, ինչ-որ, մի ֆանի, որոշ, ովև, որևէ, ուրիշ, գոյականական՝ մեկը, ինչ-որ մեկը, մի ֆանիսը, մակբայական երբևէ բառերը: Ժխտական դերանունների մեջ գրվում են գոյականական ոչինչ, ոչ մեկը, ոչ ո՛վ և ածականական ոչ մի բառերը:

Ինչպես տեսնում ենք, այս բառերը բուն իմաստով իրադրական բնույթ չունեն. նրանց իմաստը որոշվում է ոչ թե հաղորդակցական կամ կոնտեքստային իրադրությամբ, այլ հաղորդողի (արտահայտվողի) իմացության աստիճանով և քանակական ընդհանուր գնահատմամբ: Ավելի ճիշտ, հիշյալ բառերի իմաստները կապված են մեր կողմից նշված համընդհանուր կաղապարի մեջ բերված այնպիսի կարգերի հետ, ինչպիսիք են կազմը (ամբողջի և բաղադրիչի, նույնության և տարբերության հարաբերություններ), թիվը (ընդհանուրի, մասնականի և առանձինի հարաբերություն) և իմացությունը (օբյեկտի և նշանի հարաբերություն, հատկապես օբյեկտի անձանոթություն կամ ծանոթություն), որոնք տվյալ դեպքերում կապված չեն անմիջական իրադրության հետ. դրանք անպայման հաղորդակցային կոնկրետ ակտ և ունկնդիր (ընկալող) չեն պահանջում, կոնտեքստի մերձակա բառերի իմաստներով չեն ճշտվում, կարող են գործածվել անկախ դրանցից: Էլ չենք խոսում այն մասին, որ շի պահանջված եզրային որոշակի հակադրությունների տարբերակման սկզբունքը. այսպես, այլ-ը և ուրիշ-ը կան, նույն-ը ոչ. մեկ և բոլոր հակադիր եզրերը կան, կես միջին եզրը՝ ոչ և այլն:

Մասնավորապես միարժեք լուծում ունի «որոշյալ» կոչված բառերը դերանուններից հանելու հարցը. 1) կազմի և թվի տարբեր եզրեր արտահայտող ամբողջ, բոլոր, մի ֆանի, մեկը և այլն տիպի բառերն ընդհանրապես անվանական արժեք ունեն. 2) քանի որ բառիս բուն իմաստով որոշյալ դերանուններ են ցուցականները, «որոշյալ» կոչվածները ընդհանրապես չեն կարող որակվել որպես բուն որոշյալներ. 3) «որոշյալ» կոչված բառերը իմաս-

¹³ Մ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Եր., 1956, էջ 135—142. Է. Աղայան, Է. Բարսեղյան, Հայոց լեզու, Եր., 1965, էջ 186—187:

տային զուգահեռներ ունեն ծանոթ, որոշյալ, հայտնի տիպի ածականների հետ, որոնք, սակայն, դերանունների մեջ չեն դրվում, և շնչվում է դրանց տարբերակման սահմանը:

Եթե «որոշյալ» կոչված բառերի դեպքում դրանք դերանուններից հանելու հարցը կասկած չի հարուցում և լուծվում է միանշանակ կերպով, ապա «անորոշ» և «ժխտական» կոչված բառերի դեպքում կարելի է որոշ զիջում անել ավանդությանը և դրանք որոշ ճշտումներով թողնել միևնույն «անորոշ» անվան տակ (որպես դրական և ժխտական տարբերակներ) մի շարք նկատառումներով:

Առաջին՝ «անորոշ» դերանունները կապված են արտահայտվողի իմացության աստիճանի հետ, որ որոշ առումով առնչվում է հաղորդակցման և տեքստային իրադրություն հետ:

Երկրորդ՝ առկա է որոշակի ստուգաբանական հիմք, որ, իհարկե, պատահական չէ. այս դերանունների մեջ հաճախադեպ են հարցական-հարաբերական դերանունների բաղադրիչները՝ ինչ, որ, երբ (ամեն ինչ, ինչ-որ, որևէ, երբևէ և այլն):

Երրորդ՝ «անորոշ» կոչված դերանունները կապված են հաղորդակցման մեջ պատասխանի բնույթի հետ, որ հենվում է (ըստ պատասխանողի իմացության աստիճանի) հարցման վրա՝ ի՞նչ—ինչ-որ, ո՞ր—որևէ և այլն, այսինքն՝ պատասխանողը հարցնողի հարցական բառը զարձնում է հարաբերական՝ բուն բնութագրող-անվանական մասը թողնելով անորոշ:

Չորրորդ՝ հարցի լուծման համար էական է դառնում հոգերի հետ անցկացվող համարանությունը: Ինչպես հայտնի է, այն լեզուներում, որոնցում առկա են որոշիչ և անորոշ հոգեր, սովորաբար տարբերում են հոգային երեք եզր (քերականությ, գրամմ)՝ 1) որոշիչ հոգ, 2) անորոշ հոգ և 3) զրո հոգ: Հայերենում որոշիչ հոգը վերջավորություն է, անորոշ հոգը՝ առանձին բառ՝ մի, որ ձևականորեն տարբերակված է մեկ թվականից: Ահա քերականները փորձում են մի կողմից՝ գտնել բառային համանիշներ և ստեղծել հակադրությունների որոշակի համակարգ, մյուս կողմից՝ որոշիչ (ածականական) տիպի բառերը լրացնել դերանունների համար քնորոշ գործառական եռաշարքությամբ՝ նաև գոյականական և մակրայական բառերով (մի և մեկը, մի կերպ):

Վերջապես, կարելի է ասել, որ անորոշ դերանունները անորոշության զուգահեռություն ունեն հարցական և հարաբերական դերանունների մեջ, թեև վերջիններիս անորոշությունը լուծելի է իրադրականորեն. 1) հարցական դերանունները կապված են հարցման հետ և լրացուցիչ ցանկական-զրղչական եղանակավորություն ունեն. նրանց անորոշությունը լուծվում է պատասխանով. 2) հարաբերական դերանունները շղկապական արժեք ունեն, և նրանց անորոշությունը լուծվում է կոնտեքստում անմիջապես նախորդող, երբեմն էլ հաջորդող բառերի միջոցով: Անորոշ «դերանունները» ինքնին անորոշ են. բուն անորոշները անորոշ են ըստ արտահայտվողի իմացության, ժխտականները՝ ըստ արտահայտվողի պատասխանի բնույթի, որ ժխտում է՝ առանց տեղը նոր բան դնելու. հմտ. ո՞վ— ա) ինչ-որ մեկը, բ) ոչ ոք:

Г. Б. ДЖАУКЯН—Характер и классификация местоимений.—

В армянской грамматической литературе учение о местоимениях формировалось в течение полутора тысячелетий и содержит особенности пройденного пути. Как в определении, так и в классификации местоимений намечается два подхода. Местоимение обычно определяется как слово, заменяющее имя, но некоторые грамматисты отличают его от имени: отсутствием постоянного значения или обозначением признака

недифференцированно—обобщенно. Классификация местоимений проводится по двум признакам: семантическому и функциональному.

Главной чертой местоимения автор статьи считает ситуативность его значения, которая в контексте выступает как анафоричность. Одновременно он считает, что, во-первых, при классификации местоимений семантический и функциональный принципы не исключают друг друга, а дополняют; во-вторых, в связи с установлением ситуативно-анафорического характера местоимения как их главной черты следует снять из их состава т. н. определенные местоимения, а неопределенные и отрицательные оставить лишь условно—и то как обозначения положительного и отрицательного ответа на вопросительные местоимения: **Кто?—1) кто-то и 2) никто:**